



# ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 66

Տրված է՝

**<<Էկո Առողջիկ>> ՍՊԸ**  
ք. Երևան, Կոմիտաս 38/2

Դորժունելությունը՝

**<<Գեղթիմ>> ՓԲԸ-ի Խաչաքար գեղամասում 31.16կմ<sup>2</sup> մակերեսով փարածքում որոնողական և որոնողահետախուզական աշխաղանքների ծրագրի վերաբերյալ**  
*<<Սյունիքի մարզ*

Տնօրեն՝



Դ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ:

# ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 66

«03» 08 2012թ.

«Էկո Առողջություն» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեորիմ» ՓԲԸ ՀՀ Սյունիքի մարզում  
Խաչաքար տեղամասում 31.16կմ<sup>2</sup> մակերեսով տարածքում  
որոնողական և որոնողահետախուզական աշխատանքների

ծրագրի վերաբերյալ

օրացույց 584 օրինակ  
6.08.12 Ժամ

Պատվիրատու՝

«Գեորիմ» ՓԲԸ

Նախագծող՝

«Էկո Առողջություն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատական

Տեղադրման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզ

«Գեորիմ» ՓԲ ընկերությունը ՀՀ Սյունիքի մարզում Խաչաքար տեղամասում 31.16կմ<sup>2</sup>  
մակերեսով տարածքում նախատեսում է իրականացնել որոնողական և  
որոնողահետախուզական աշխատանքներ:

Խաչաքար տեղամասում նախատեսվում է համալիր երկրաբանական  
ուսումնասիրություններն իրականացնել 3 փուլով:

Առաջին փուլ. կանցկացվեն երկրաբանական երթուղիներ նախապես ընտրված  
հետախուզագծերով 1:2000, 1:5000 և 1:10000 մասշտաբներով: Ուղերքների ընթացքում  
կճշգրտվեն և կսահմանագծվեն ապարների սահմաններն:

Հնարավորության դեպքում կճշտվի շերտագրական կտրվածքը: Նախապես ընտրված  
ցանցով կանցկացվեն 7 հորատանցքեր և 25 հետախուզահորեր: Այս փուլի աշխատանքները  
կուղեկցվեն նաև քարաբեկորային նմուշարկմամբ՝ նպատակ ունենալով իրականացնել  
մանրամասն միներալապետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Երկրորդ փուլ. առաջին փուլում հուսադրող տվյալների դեպքում, նպատակահարմար է  
շարունակել հետազոտությունները առավել հետաքրքիր տեղամասերում: Ելնելով առաջին փուլի  
տվյալներից, ինչպես նաև նախկինում կատարված աշխատանքների արդյունքներից,  
կանցկացվեն նոր հորատանցքեր և հետախուզահորեր ավելի հետաքրքիր տեղամասում: Այս  
փուլում հիմնականում կեզրագծվեն ինչպես ապարների տարածման սահմանները, այնպես էլ  
կքարտեզագրվեն դրանց տարբեր ֆրակցիաների ելքերը: Երկրորդ փուլի աշխատանքների  
հիման վրա կվերցվեն փորրածավալ տեխնոլոգիական նմուշներ քաղմակողմանի  
ուսումնասիրությունների համար:

Երրորդ փուլ. կավարտվեն որոնողագնահատողական աշխատանքները, կամփոփվեն  
ստացված երկրաբանական, անալիտիկ և տեխնոլոգիական հետազոտությունները, հանքային

գոտու հայտնաբերման դեպքում կկազմվեն հանքայնացման եռաչափ մոդելներ ու կընտրվեն հեռանկարային առաջնահերթ տեղամասերը, որոնց շրջակայքում նպատակահարմար կլինի իրականացնել մանրամասն որոնողահետախուզական աշխատանքներ:

Խաչաքար տեղամասում նախատեղվում է 1:2000, 1:5000 և 1:10000 մասշտաբների որոնողական երթուղիների անցկացում ու քարտեզագրման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ճշգրտել տեղամասի երկրաբանական կառուցվածքը, ինչպես նաև իրականացնել երկրաբանական մանրակրկիտ քարտեզագրում: Նախատեսվող աշխատանքների ծավալը կազմում է 31.16կմ<sup>2</sup>: Աշխատանքները պետք է ուղեկցվեն քարաբեկորային մեծաքանակ նմուշների վերցմամբ, որոնք պետք է ենթարկվեն մանրամասն միմերալոգիական և անալիտիկ ուսումնասիրությունների:

Տեղանքում նախատեսվում է անցկացնել 25 հետախուզական հորերի անցում, որը թույլ կտա հայտնաբերել ապարների փոփոխված գոտիները և կատարել նմուշարկման աշխատանքներ: Հետախուզական հորերը նախատեսվում է իրականացնել մեխանիզմների օգնությամբ: Հետախուզական հորերը կունենան 2x2x2մ<sup>3</sup> ծավալ: Բոլոր 25 հետախուզական հորերը միասին կունենան 200մ<sup>3</sup> ծավալ:

Փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզական փորվածքները ենթակա են լցման՝ ելեկով անվտանգության տեխնիկայի պահանջներից:

Ընդլայնված տեղամասի խորքային կառուցվածքների ու միներալային գոտիների հետախուզման նպատակով նախատեսվում է շուրջ 840 գծամետր հորատման աշխատանքներ: Հորատման աշխատանքներին իրականացվելու են 90° անկյան տակ և 50 ազիմուտ ունեցող 3 երթուղիներով, որոնց միջև հեռավորությունը 500մ է:

Որոնողական աշխատանքների ընթացքում մթնոլորտային արտանետումները պայմանավորված են հորատման աշխատանքների ժամանակ առաջացող անօրգանական փոշու և հորատող տեխնիկայի կողմից օգտագործվող դիգելային վառելիքի արտանետումներով: Դիգելային վառելիքը օգտագործվում է հորատող մեկ մեքենանայի կողմից:

Որոնողական աշխատանքների ընթացքում մթնոլորտ է արտանետվում՝ անօրգանական փոշի 0.4 տ/տարի, ածխածնի օքսիդ 3.76 տ/տարի, ազոտի օքսիդներ 1.83 տ/տարի, ածխաջրածիններ 0.37 տ/տարի, պինդ մասնիկներ 0.19 տ/տարի, ծծմբի օքսիդ 0.0018 տ/տարի:

Արտանետվող վնասակար նյութերի մթնոլորտում ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային «Ռադուգա» ծրագրով: Համաձայն վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկների սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գրտու համար թույլարտելի նորմերի սահմաններում:

Տվյալ տարածքի կենսաբազմազանության համարի ուսում-նա-սիրությունները իրականացվել են ոչ միայն ընկերության մասնագետների կողմից, այլ նաև ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի մասնագետների կողմից: Հատուկ շեշտեց, որ այդ հետազոտություններով հաստատվել է, որ տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում (2010թ.) գրանցված բույսերն ու կենդանիները:

Աշխատողների և բանվորների (այդ թվում վարորդների) կոմունալ-կենցաղային կարիքների ջրապահանջը կիրականացվի Ամուսարի հանքավայրի երկրաբանահետախուզական ճամբարից. Որտեղ երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում տեղադրվել են վարչական տնակներ, ինչպես նաև տեղադրվել է առանձին տնակ, որը կահավորված է սանհանգույցներով:

Սանհանգույցներում և խոհանոցներում առաջացող կեղտաջրերի մաքրման համար տեղադրված է գերմանական ATB Umwelttechnologie GmbH արտադրության AQUA max մակնիշի կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան: Նշված ճամբարի երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը սահմանված կարգով ենթարկվել է փորձաքննության և ստացվել է փորձաքննական եզրակացություն:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով՝ նախագծքով նախատեսվում է հետախուզահորերի և հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը և պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, ծածկել հողաշերտով: Հողի ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է 256000 դրամ:

Որոնողական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝ արգելել տեխնիկայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմում և խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին:

### Փորձաքննական պահանջ

Առաջին փուլով նախատեսված աշխատանքների արդյունքում հուսադրող տվյալների առկայության դեպքում՝ երկրորդ և երրորդ փուլերի աշխատանքները իրականացնելիս առաջնորդվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էկո Առողջություն» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեորիմ» ՓԲԸ ՀՀ Սյունիքի մարզում Խաչարար տեղամասում 31.16կմ<sup>2</sup> մակերեսով տարածքում որոնողական և որոնողահետախուզական աշխատանքների ծրագրի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝

Փորձագետ՝

Հ. Գրիգորյան

Ա. Սինասյան

